ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/93

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Բողոք բերող՝ «Ամարաս Յուս» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Լիգա Պլյուս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Տ. Կարապետյանի,
«Ամարաս Յուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Բարեյանի,
«Լիգա Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Քոյլոյանի, Հ. Ղազարյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՉ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» և «ԵՉ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգ, ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 09.09.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել ընդունել՝ «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում, պարտավորեցնել չեղյալ համարել «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը, պարտավորեցնել դադարեցնել նույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի և թիվ 3 արձանագրությունները և պարտավորեցնել «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել նոր բանակցություններ հրավիրելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 09.09.2020թ.-ին:

09.09.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/93 համարի ծածկագիրը և հրապարակվել www.gnumner.am կայքում:

16.09.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Լիգա Պլյուս» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

16.09.2020թ.-ին, 23.09.2020թ.-ին և 02.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.10.2020թ.-ին:

2. «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ամարաս Յուս» ՍՊԸ-ն 09.09.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ) ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտարարվել է ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերման գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման CPV կոդ նշվել է հետևյալ կոդը՝ 44621160:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է որ սույն ընթացակարգը կազմակերպվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 21.08.2020 թվականին:

Ընթացակարգին մասնակցել է միայն 1 մասնակից Ամարաս Յուս ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի մասին 21.08.2020 թվականի N 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա) մասը, որոշել է վարել միաժամանակյա բանակցություններ մասնակցի հետ ներկայացված գնային առաջարկի նվազեցման շուրջ:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ կողմերը բանակցության արդյունքում չեն հանգել երկկողմ համաձայնության, ինչը հիմք է հանդիսացել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու համար, քանի որ մանակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

Եվ այսպես, ցանկանում ենք ներկայացնել Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տրված խախտումները.

Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնման ընթացակարգի հրավերի.

7.5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 7.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի

հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացուսծ բոլոր մասնակիցներին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները, զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար

գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Տվյալ պարագայում, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ցանկանում ենք հայտնել, որ սույն գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել վերոհիշյալ հրավերով սահմանված նորմերի խախտումներ, մասնավորապես Հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում չի ուղարկվել մասնակից ընկերությանը, այնինչ այն պետք է ուղարկվեր՝ նշելով բանակցությունների օրը և ժամը, քանի որ նիստին ներկա ընկերության լիազորված ներկայացուցիչը լիազորված չի եղել բանակցությունների մասնակցելու, այլ միայն լիազորված է եղել ծրարը հանձնելու, Պատվիրատուն մասնակցի առանց բանակցությունների հրավիրելու որոշել է ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ) ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և Հրավերի 7.6-րդ մասը:

Պատվիրատուն ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ) ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարելով չկայացած (www.gnumner.am կայքում բացակայում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում/առկա է միայն արձանագրություն) 2020-08-26-ին հայտարարում է նոր գնանշման հարցման ընթացակարգ՝ նույն գնման առարկայով և նույն ԳՄԱ դասակարգման CPV կոդով՝ այսինքն, կարելի է եզրահանգել, որ տվյալ պարագայում գնման առարկան նույնանում է, քանի որ գնման առարկայի անվանումը և CPV կոդը նույնն է:

Եվ քանի որ, եթե Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից այս բողոքը բավարարվելու դեպքում հնարավոր է իրականացնել որ բանակցություններ ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ) ծածկագրով Ընթացակարգի մասով, իսկ ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ) ծածկագրով և ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ) ծածկագրով ընթացակարգի առարկան նույնն է, ուստի տվյալ դեպքում որպեսզի չխախտվի մասնակցի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքները և միաժամանակ հնարավոր լինի կատարել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը, ուրեմն այս իրավիճակում պետք է չկայացած հայտարարվի նաև ԵՁ67ՀԴ- ԳՀԱՊՁԲ-(20/2Կ) ծածկագրով ընթացակարգը:»:

Ելնելով վերոգրյալից, «Ամարաս Յուս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել ընդունել՝ «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում, պարտավորեցնել չեղյալ համարել «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած

հայտարարելու մասին որոշումը, պարտավորեցնել դադարեցնել նույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի և թիվ 3 արձանագրությունները և պարտավորեցնել «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել նոր բանակցություններ հրավիրելու մասին որոշում:

3. <u>«Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 10.09.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/13690-2020 գրությամբ դիմել է «Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի կողմից 09.09.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 11.09.2020թ.-ին թիվ 84 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Եղիշե Չարենցի անվան հ.67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ջեռացման համակարգի կաթսաների ձեռքբերման ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից լիազորված անձը ներկայացրել է տվյալ ընթացակարգի հայտը, ընդ որում լիազորագրում նշված, որ վերջինս լիազորված է ընկերության անունից հանձնելու հայտը և ներկա գտնվելու բացման նիստին: Քանի որ տվյալ անձը միակ մասնակիցն էր և լիազորված ներկա գտնվելու բացման նիստին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ա) ենթակետը՝ (ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները՝ համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները), ինչի արդյունքում գնային առաջարկի նվազեցում տեղի չի ունեցել: Համաձայն «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ (հայտերից ոչ մեկը չի բավարարում հրավերի պահանջներին), ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Դպրոցը շահագրգիռ է, որ հնարավորինս շուտ կայանա գնման գործընթացը, քանի որ խոսքը վերաբերում է դպրոցի ջեռուցման հարցին, որի հետ անմիջական կապված է երեխաների առողջությունը, ուստի անհանգստությունս եմ հայտնում ստեղծված իրավիճակի հետ կապված, և դրանով է պայմանավորված գնման ընթացակարգի հրատապությունը:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Լիգա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, թիվ «ԵՀ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրով ընթացակարգի մասնակից «Լիգա Պլյուս» ՍՊԸ-ն ներգրավվել է գործի քննությանն որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

«Լիգա Պլյուս» ՍՊԸ-ն 16.09.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«1.1. «Երևանի Եղիշե Չարենցի անվան հ.67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ Պատվիրատու) 14.08.2020 թվականին հայտարարել է «ԵՀ67ՀԴ- ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև Ընթացակարգ 1), իր կարիքների համար՝ ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերման նպատակով:

«ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերությունը Ընթացակարգի շրջանակում Ընթացակարգի 1-ի շրջանակում եղել է միակ մասնակիցը, ում հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընթացակարգ 1-ի շրջանակում 21.08.2020 թվականին հրավիրվել են բանակցություններ, որի արդյունքում ներկայացված գնային առաջարկը գերազանցել է նախահաշվային գինը, որի հիմքով Ընթացակարգ 1-ը հայտարարվել է չկայացած:

1.4.«Երևանի Եղիշե Չարենցի անվան հ.67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ Պատվիրատու) 26.08.2020 թվականին հայտարարել է «ԵՀ67ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև Ընթացակարգ 2), իր կարիքների համար՝ ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերման նպատակով:

1.5.Ընթացակարգ 2-ին մասնակցել են «ԼԻԳԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊ ընկերությունը և «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերությունը, որոնց կողմից ներկայացված հայտերը գնահատեց բավարար և Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 04.09.2020 թվականին մեկ աշխատանքային օրով կասեցվեց հայտերի բացման նիստը 10.09.2020 թվականին

բանակցություններ հրավիրելու նպատակով, հաշվի առնելով այն հանգամանը, որ նեկայացված գնային առաջարկները բարձր են եղել նախահաշվային գնից:

1.6.«ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերության կողմից 09.09.2020 թվականին բողոքարկվեց «ԵՀ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» և «ԵՀ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնման ընթացակարգերը:

Գտնում եմ, որ սույն գործով պարզաբանման է ենթակա հետևյալ հարցադրումները՝

2.1.Բողոքարկված «ԵՀ67ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1 Կ)» և «ԵՀ67ՀԳ-ԳՀ;ԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնման ընթացակարգերից, որն է հիմնական պահանջը և որը ածանցյալ:

2.2. «ԵՀ67ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերության կողմից բանակցություններին մասնակցած ներկայացուցիչը ուներ արդյո՞ք համապատասխան լիազորություններ, թե՞ ոչ:

2.3. «ԵՀ67ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը լուծարված է, թե՞ ոչ և արդյո՞ք բողոքով ներկայացված պահանջի հասցեատերը/սուբյեկտը առկա է, թե՞ ոչ և դրանով պայմանավորված բողոքը առարկայազուրկ է, թե՞ ոչ:

2.4. «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերության կողմից «ԵՀ67ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգը «ԵՀ67ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում հայտ ներկայացնելուց հետո բողոքարկելը արդյո՞ք իրավունքի չարաշահում է թե՞ ոչ, և արդյո՞ք խախտում է Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սկզբունքները, թե՞ ոչ:

Գնումների մասին « օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 29-րդ կետի համաձայն՝ Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:

Կարգի 58-րդ կետի համաձայն՝ Եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: (...):

Կարգի 98-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակցի գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա պատվիրատուն կարող է ընտրված մասնակցին առաջարկել նվազեցնել իր գնային առաջարկը: Անհամաձայնության դեպքում տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և պատվիրատուն բանակցությունների է հրավիրում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին, իսկ վերջինիս անհամաձայնության դեպքում մրցույթը հայտարարվում է չկայացած:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային գինը, ապա գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրվում են բանակցություններ: Եթե հրավիրված բանակցությունների արդյունքում մասնակիցների կողմից առաջարկված գինը կրկին գերազանցում է նախահաշվային գինը, ապա մասնակցի հայտը մերժվում է: Նշվածով պայմանավորված գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, որը հիմք է նոր գնման ընթացակարգ հայտարարելու համար:

Գնման ընթացակարգերի իրականացումը, ի թիվս այլնի՝ պետք է հիմնված լինի այնպիսի սկզբունքների հիման վրա, որպեսզի ապահովվի մրցակցային միասնական կանոններ, ոչ խտրական մոտեցում, մրցակցության խրախուսում և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Վերոգրյալով պայմանավորված պետք է փաստել, որ բողոքարկման գործընթացում պետք է ներգրավված լինեն գնման ընթացակարգում ներգրավված բոլոր մասնակիցները նրանց իրավունքների չոտնահարման նպատակով, քանզի բողոքարկման ընթացքում քննության առարկա է դարձվում գնման ընթացակարգին առնչվող հարցերը, դրա շուրջ որոշումների կայացումը, որը միանշանակ առնչվում է մյուս մասնակիցների իրավունքներին և շահերին:

Իդեպ բողոքարկման գործընթացն էլչպետք է լինի ինքնապատակ և կողմերը չպետք է չարաշահեն իրենց իրավունքները, այն պետք է ուղղված լինի իրական և օրինաչափ ակնկալիքի և բացի այդ բողոքարկման առարկայով պայմանավորված ակնկալիքն էլ պետք է հնարավոր լինի: Այսինքն այն բոլոր դեպքերում երբ բողոքարկումը ուղղված է գնահատող հանձնաժողովի գործողությունների դեմ, ապա պետք է այն լուծարված չլինի, հակառակ դեպքում առկա չէ հասցեատերը ում ուղղված է պահանջը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Ընթացակարգ 1-ի շրջանակում 21.08.2020 թվականին հրավիրվել են բանակցություններ, քանզի միակ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում էր նախահաշվային գինը: Բանակցությունների արդյունքում գինը չի նվազեցվել, որի հիմքով Ընթացակարգ 1-ը հայտարարվել է չկայացած: Իսկ հաջորդ օրը օրենքի ուժով «ԵՀ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը համարվել է լուծարված:

Գործելով իրավաչափ Պատվիրատուն 26.08.2020 թվականին հայտարարել է «ԵՀ67ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրով գնման ընթացակարգը, որի շրջանակում արդեն իսկ մասնակցություն են ունեցել երկու անձինք և կրկին գնային առաջարկները գերազանցել են նախահաշվային գինը, որով պայմանավորված 10.10.2020 թվականին հրավիրվել են բանակցություններ, սակայն մինչ այդ մասնակիցներից «ԱՄԱՐԱՍ ՅՈԻՍ» ՍՊ ընկերությունը 09.09.2020 թվականին բողոքարկել է «ԵՀ67ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» և «ԵՀ67ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնման ընթացակարգերը: Ի դեպ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ բողոքարկված գնման երկու ընթացակարգերին էլ մասնակցել է «ԱՄԱՐԱՍ ՅՈԻՍ» ՍՊ ընկերությունը և առաջին ընթացակարգի շրջանակում կայացված որոշումների վերաբերյալ ունենալով անհամաձայնություն, բողոքարկել է միայն երկրորդ ընթացակարգի շրջանակում հայտերը բացելուց հետո, որից ակնհայտ էր այլ անձի մասնակցությունը:

Նախ պետք է փաստել, որ Ընթացակարգ 1-ը չկայացած հայտարարելու 21.08.2020 թվականի որոշումից հետո, հաջորդ օրը օրենքի ուժով հանձնաժողովը համարվում է լուծարված և «ԱՄԱՐԱՍ ՅՈԻՍ» ՍՊ ընկերության կողմից 09.09.2020 թվականին «ԵՀ67ՀԴ-

ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված բողոքը չունի հասցեատեր և ակնհայտ անհիմն է, քանզի դրա պահանջը ուղղված է «ԵՁ67ՀԴ- ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին որոշակի գործողություններ կատարելու պարտավորեցնելուն, որը նշվածով պայմանավորված առարկայազուրկ է:

Սույն գործով կարևոր է նաև տարբերակել հիմնական պահանջը ածանցյալից, քանզի «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերության կողմից 09.09.2020 թվականին ներկայացված բողոքի մյուս հիմքով, որը առնչվում է «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնման ընթացակագրին ածանցյալ է մյուս բողոքի հիմքին: «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերությունը 09.09.2020 թվականի բողոքով խնդրել է չկայացած հայտարարել «ԵՁ67ՀԴ-9-ՀԱՊՁԲ-(20/24)» ծածկագրերով գնման ընթացակարգը դրա առարկան «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ- (20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի առարկայի հետ նույնական լինելու հիմքով: Նշված փաստական հիմքերի արագայում պետք է արձանագրել, որ «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ- (20/1 Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի «վերսկսման» արդյունքում նոր միայն հնարավոր կլինի քննության առարկա դարձնել ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքը, ուստի այն հանդիսանում է ածանցյալ պահանջ և «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքի մերժման հիմքով բողոքը մերժման է ենթակա նաև երկրորդ հիմքով՝ ԵՁ67ՀԴ- ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնման ընթացակարգի մասով:

Անդրադառնալով «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերության վարքագծին հայտնեմ հետևյալը, որ եթե նրա ներկայացուցիչը (որը դեռ պարզաբանման ենթակա հարց է) չուներ համապատասխան լիազորություններ բանակցություններ վարելու համար, ինչու չվիճարկեց գնահատող հանձնաժողովի կողմից «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումը դեռևս մինչև ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնման ընթացակարգի հայտարարումը կամ առնվազն մինչև հայտերի բացումը: Ընթացակարգ 2-ի հայտերի բացումից հետո «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերությունը ստացավ տեղեկություններ այլ մասնակցի առկայության և նրա կողմից ներկայացված գնային առաջարկի մասին, որից հետո նոր միայն բողոքարկեց երկու Ընթացակարգերը, որը հակասում է գնման ընթացակարգի սկզբունքներին և «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերության կողմից իր իրավունքների չարաշահման և ոչ բարեխիղճ գործելու արդյունքում հենց իրեն վնասեց առարկայազուրկ դարձնելով «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքը, քանզի գնահատող հանձնաժողովը, ում հասցեգրված է բողոքով պահանջը այլևս լուծարված է:

Պատասխանելով պարզաբանման ենթակա հարցերին հայտնեմ հետևյալը, որ՝

3.1.Բողոքարկված «ԵՀ267ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1 Կ)» և «ԵՀ267ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնման ընթացակարգերից, հիմնական պահանջը վերաբերվում է «ԵՀ267ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով ընթացակարգին և սույն դիրքորոշմամբ ներկայացված հիմնավորումների շրջանակում ենթակա է մերժման և որպես ածանցյալ պահանջ մերժման է ենթակա նաև «ԵՀ267ՀԴ- ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքը:

3.2. «ԵՀ267ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերության կողմից բանակցություններին մասնակցած ներկայացուցչի լիազորությունների վերաբերյալ դիրքորոշումը ենթակա է ներկայացված լիազորագրի պատճենը ունենալու պարագայում, որի կցվել է բողոքին և բողոքներ քննող անձին միջնորդում եմ տրամադրել դրա պատճենը:

3.3. «ԵՀ267ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի լիազորությունները լուծարված է օրենքի ուժով, և սույն գործով ներկայացված բողոքը «ԵՀ267ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ առարկայազուրկ է, քանզի պահանջը ներկայացված է նույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որը բողոքի ներկայացման օրվա դրությամբ այլևս լուծարված էր:

3.4. Գտնում եմ, որ «ԱՄԱՐԱՍ ՅՈՒՍ» ՍՊ ընկերության կողմից «ԵՀ267ՀԳ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնման ընթացակարգը «ԵՀ267ՀԳ-ԳՀԱՊՁԲ- (20/2Կ)» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում հայտ ներկայացնելուց հետո բողոքարկելը իրավունքի չարաշահում է և արդյո՞ք խախտում է Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սկզբունքները, քանզի հակառակ պարագայում բողոքը կներկայացվեր ոչ թե Ընթացակարգ 2-ին մասնակցելուց և հայտերի բացումից հետո, այլ առնվազն Ընթացակարգ 2-ի հրավերի հայտարարությունից հետո:

Ուստի գտնում եմ, որ սույն գործով ներկայացված բողոքը ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման Պատվիրատուն գործել է բարեխիղճ ապահովել օրենսդրական նորմերի պահանջները և գնման ընթացակարգի սկզբունքները: Ներկայացված պահանջը և ՀՀ Սահմանադրությանը կարված վերացական հղումները կիրառելի չեն սույն գործով և բողոքը բավարար փաստարկված և հիմնավորված չէ:»:

Ելնելով վերոգրյալից՝ Երրորդ անձը Բողոքներ քննող անձին խնդրել է «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/93 ծածկագրով բողոքը մերժել:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերման նպատակով 14.08.2020թ.-ին հայտարարվել է «ԵՉ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1):

ii. Ընթացակարգ 1-ը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 13.08.2020թ.-ի թիվ 1 որոշմամբ:

iii. Ընթացակարգ 1-ի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնով գնման առարկա է հանդիսանում ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 44621160, քանակը՝ 2:

iv. Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Ամարաս Յուս» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.08.2020թ.-ի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջները, հաշվի առնելով, որ «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը բարձր է նախահաշվային արժեքից, որոշել է միաժամանակյա բանակցություններ վարել մասնակցի հետ գնային առաջարկը նվազեցնելու համար:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, բանակցության արդյունքում չհանգելով երկկողմյա համաձայնության, գնահատող հանձնաժողովը որոշել է «ԵՉ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով անցկացվող մրցույթը համարել չկայացած՝ նախահաշվային գնից առավել բարձր գնային առաջարկի պատճառով:

vii. «Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերման նպատակով 26.08.2020թ.-ին

հայտարարվել է «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2):

viii. Ընթացակարգ 2-ը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 26.08.2020թ.-ի թիվ 1 որոշմամբ:

ix. Ընթացակարգ 2-ի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնով գնման առարկա է հանդիսանում ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 44621160, քանակը՝ 2:

x. Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ամարաս Յուս» ՍՊԸ-ն և «Լիգա Պլյուս» ՍՊԸ-ն:

xi. Գործում առկա վեճի առարկա հանդիսացող լիազորագրի համաձայն՝ «Ամարաս Յուս» ՍՊԸ-ն լիազորել է Ջեմմա Հովհաննիսյանին, որպեսզի վերջինս ընկերության անունից հանձնի ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հայտը և ներկա գտնվի բացման նիստին:

xii. «Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2020թ.-ի գնումների հաստատված պլանում առկա տվյալների համաձայն՝ գնման առարկայի՝ ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերման համար որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ նշվել է 44621160, քանակը՝ 2, իսկ գինը՝ 3 990 000 ՀՀ դրամ:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի կողմից 09.09.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները **(համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),**

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած

բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու կամ վերջիններիս ներկայացուցիչների՝ բանակցություններին մասնակցելու (բանակցություններ վարելու) իրավասությամբ օժտված չլինելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերման նպատակով 14.08.2020թ.-ին հայտարարված «ԵՉ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած միայն մեկ մասնակից՝ «Ամարաս Յուս» ՍՊԸ-ն ներկայացրել է 6 000 000 ՀՀ դրամ գումարի գնային առաջարկ: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջները, հաշվի առնելով նաև որ «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը բարձր է նախահաշվային արժեքից, որոշել է միաժամանակյա բանակցություններ վարել մասնակցի հետ գնային առաջարկը նվազեցնելու համար: Այնուհետև, Հանձնաժողովը, բանակցության արդյունքում չհանգելով երկկողմյա համաձայնության, որոշել է «ԵՉ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ նախահաշվային գնից առավել բարձր գնային առաջարկի պատճառով:

Գործում առկա վեճի առարկա հանդիսացող 20.08.2020թ.-ին տրված լիազորագրի համաձայն՝ «Ամարաս Յուս» ՍՊԸ-ն լիազորել է Ջեմմա Հովհաննիսյանին, որպեսզի վերջինս ընկերության անունից հանձնի «ԵՉ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հայտը և ներկա գտնվի բացման նիստին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ 14.08.2020թ.-ին հայտարարված «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության ներկայացուցիչը լիազորված չի եղել մասնակցելու բանակցություններին, որպիսի պայմաններում ներկայացուցիչը չէր կարող հանդես գալ և ներկայացնել Ընկերության շահերը բանակցության ժամանակ, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում:

Տվյալ պարագայում Հանձնաժողովը պետք է կիրառեր Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության դրույթները, այն է՝ նիստը կասեցներ, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ 14.08.2020թ.-ին հայտարարված «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնման ընթացակարգն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա չկայացած հայտարարելու մասին կայացրած որոշումն իրավաչափ չէ, ուստի և ենթակա է վերացման:

Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով՝ «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» և «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով ընթացակարգերի հրավերների թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, այն որ երկու ընթացակարգերով 1-ին չափաբաժնով գնման առարկան է հանդիսանում ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 44621160, քանակը՝ 2, ինչպես նաև «Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2020թ.-ի գնումների հաստատված պլանում առկա տվյալները, այն որ՝ գնման առարկայի՝ ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերման համար որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ նշվել է 44621160, քանակը՝ 2, իսկ գինը՝ 3 990 000 ՀՀ դրամ, հաստատված է համարում, որ «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ու «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրերով ընթացակարգերի գնման առարկաները նույնն են և «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)»

ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ընթացակարգի չկայացած հայտարարվելու հետևանքով:

Անդրադառնալով գործով որպես երրորդ անձ ներգրավված «Լիգա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմամբ ներկայացված հանգամանքներին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Բողոքներ քննող անձի կողմից «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին կայացված որոշման դադարեցմամբ, վերանում են Կարգի 29-րդ կետով սահմանված հանձնաժողովի իրավասությունների դադարած լինելու համար (լուծարված) հիմք հանդիսացող հանգամանքները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Երևանի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ջեռուցման համակարգի կաթսաների ձեռքբերման նպատակով 14.08.2020թ.-ին հայտարարված «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը գնահատող հանձնաժողովի կողմից չկայացած հայտարարելու մասին կայացրած որոշումն իրավաչափ չէ, ինչի արդյուքում Հանձնաժողովի կողմից չի ապահովել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված դրույթները, որպիսի պայմաններում «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ամարաս Յուս» ՍՊԸ-ի կողմից 09.09.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/93 ծածկագրով բողոքը բավարարել:

1. Դադարեցնել «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԵՁ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/2Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3. Պարտավորեցնել «ԵՉ67ՀԴ-ԳՀԱՊՁԲ-(20/1Կ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել նոր բանակցություններ հրավիրելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**